Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել և Գրետա Ռամազյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազարապատիկի չափով՝ 2.000.000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնական շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնական շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա: Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում: Տվյալ պարագայում Գրետա Ռամազյանը ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/, իրականացրել է շինարարություն, հարևանին՝ սեփականության իրավունքով պատկանող տարածքում: «Վարչական իրավախախտումների

վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհիսնապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով: Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը պետությանը, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա Լատարելը հողօգտագործման իրավունք չունեցող անձի կողմից՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազարապատիկից երկու հազար հինգ հարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 -րդ հոդվածի առաջին մասի 26 -րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188 -րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասը և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող աշխատանքային խմբի կողմից կազմված արձանագրությունը, ինչպես նաև հաշվի առնելով, որ Գրետա Ռամազյանը 30.10.2024թ. արդեն իսկ ենթարկվել է վարչական պատասխանատվության և տրվել էր ժամանակ, սույն իրավախախտումը վերացնելու և հանձնաժողովին ներկայացնելու համար, սակայն որևէ գործողություն չի կատարվել:

Որոշում եմ՝

1. Գրետա Ռամազյանի նկատմամբ նշանակել տուգանք ՀՀ Լոռու մարզի համայնք Ալավերդի, Սանահին բնակավայրում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/, ինքնական շինարարություն հարևանին սեփականության իրավունքով պատկանող տարածքում կատարելու համար 2000000 /երկու միլիոն/ ՀՀ դրամի չափով:

1.1 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշմամբ իրավախախտում կատարած անձի կողմից իրազեկվելուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա

ընթացքում՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքապետարանի հաշվեհամարին՝ **900265121146**:

2. Գրետա Ռամազյանին տալ պարտադիր ցուցում՝ անհապաղ ապամոնտաժել ապօրինի կատարած շինությունը:

3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և / կամ / համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 275-Ա

**ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-002-0067-0021 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.13832 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ՍԱՐԻՔԵԿ
ՀՐԱՆՏԻ ՄՈՍԻՆՅԱՆԻ, ՍՎԵՏԼԱՆԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄՈՍԻՆՅԱՆԻ ԵՎ ՍՂԱՐՏԱԿ
ՍԱՐԻՔԵԿԻ ՄՈՍԻՆՅԱՆԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՌԱՆԸ ԵՎ
ԾԱԾԿԸ ՆՇԱԳԾՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀՎԱՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 51-54-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 135-րդ և 202-րդ, 188-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման, և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Սարիքեկ Հրանտի Մոսինյանի դիմումը, անձնագրերի պատճենները, 09.01.2025թ. Սանահին թաղամասի վարչական ներկայացուցչի կողմից տրամադրված 01.12.1993թ. 20/9 որոշումից քաղվածքը փոստային հասցեի և կառուցման տարեթվի մասին տեղեկանքները, «ՏՄ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, մասնագիտական եզրակացությունը՝ **որոշում եմ՝**

1. Վերականգնել Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի վարչական տարածքում գտնվող, կադաստրային քարտեզի 06-002-0067-0021 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.13832 հա մակերեսով հողամասի նկատմամբ ֆիզիկական անձանց՝ Սարիքեկ Հրանտի Մոսինյանի (ծնված՝ 07.05.1966թ.), Սվետլանա Սերյոժայի Մոսինյանի (ծնված՝ 13.06.1965թ.) և Սպարտակ Սարիքեկի Մոսինյանի (ծնված՝ 29.05.1992թ.) պատկանող հողատեղակացման հիմքերը, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

2. Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի վարչական տարածքում գտնվող, Սարիբեկ Հրանտի Մոսինյանին (ծնված՝ 07.05.1966թ.), Սվետլանա Սերյոժայի Մոսինյանին (ծնված՝ 13.06.1965թ.), Սպարտակ Սարիբեկի Մոսինյանին (ծնված՝ 29.05.1992թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, կադաստրային 06-002-0067-0021 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.13832 հա մակերեսով հողամասում, 2019թ. և 2013 թ. ինքնական կառուցված կադաստրի կոմիտեում 2023B3DHE5 ծածկագրով հաշվառված, 53.1 քմ արտաքին մակերեսով (55.3 ներքին մակերեսով) մառանը և ծածկը ենթակա է գրանցման նշագծված տարբերակով, որպես ինքնական կառույց:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի կադաստրային քարտեզի 06-002-0067-0021 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և հողամասում առկա գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզ, Ալավերդի համայնք, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամասի, 2-րդ փողոց, 54 փոստային հասցե:

4. Ինքնական կառուցված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում և կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

6. Սույն որոշման առաջին կետով սահմանված անշարժ գույքի սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և այն հանդիսանում է սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

7. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Հ. ԶԱՎԱՐՅԱՆ



2025թ. փետրվարի 07
ք. Ալավերդի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 276-Ա

ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ՀՐԱԶՅԱ ԿԱՌԵՆԻ ԽԵԶՈՒՄՅԱՆԻՆ, ՏԱՏՅԱՆԱ ԼԵՈՆԻԴՈՎՆԱ ՊՈԼՈՒՆԶԵՆԿՈՅԻՆ, ԱՐԿԱԴԻ ՀՐԱԶՅԱՅԻ ԽԵԶՈՒՄՅԱՆԻՆ ԵՎ ՍԻՐՎԱՐԴ ՀՐԱԶՅԱՅԻ ԽԵԶՈՒՄՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՕԶՈՒՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-112-0023-0010 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.155 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 0.03 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԸ, ԱՎՏՈՏՆԱԿԸ, ԾԱԾԿԸ ԵՎ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԸ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 51-54-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 135-րդ և 202-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104 Լ րամանով, հիմք ընդունելով՝ Հրաչյա Կառլենի Խեչումյանի դիմումը, անձնագրերի պատճենները, 23.01.2025թ. թիվ 338 և 337 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը, Օձուն բնակավայրի վարչական ղեկավարի կողմից տրամադրված 23.01.2025թ. թիվ 327 փոստային հասցեի և 29.01.2025թ. թիվ 385 կառուցման տարեթվի վերաբերյալ տեղեկանքները, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը՝ **որոշում եմ**.

1. Վերականգնել ՀՀ Լոռու մարզի, Ալավերդի համայնքի Օձուն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, կադաստրային քարտեզի 06-112-0023-0010 Ֆաճկագրից

առանձնացվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.155 հա մակերեսով հողամասի նկատմամբ, ժառանգության իրավունքով պատկանող ֆիզիկական անձանց՝ Հրաչյա Կառլենի Խեչումյանի (ծնված՝ 03.08.1961թ.), Տատյանա Լեոնիդովնա Պոլունչենկոյի (ծնված՝ 10.03.1967թ.), Արկադի Հրաչյայի Խեչումյանի (ծնված՝ 17.05.1988թ.) և Սիրվարդ Հրաչյայի Խեչումյանի (ծնված՝ 07.08.1989թ.) հողատկացման հիմքերը, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

2. Նշված հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող՝ 1961 թվականին կառուցված բնակելի տունը, անասնաշենքերը, ավտոտնակը, սանհանգույցը և ծածկը, տնամերձ հողամասից ավել օգտագործվող, սահմանազատված՝ 0.03 հա մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով համարել Հրաչյա Կառլենի Խեչումյանի (ծնված՝ 03.08.1961թ.), Տատյանա Լեոնիդովնա Պոլունչենկոյի (ծնված՝ 10.03.1967թ.), Արկադի Հրաչյայի Խեչումյանի (ծնված՝ 17.05.1988թ.) և Սիրվարդ Հրաչյայի Խեչումյանի (ծնված՝ 07.08.1989թ.) ընդհանուր համատեղ սեփականությունը:

3. Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Օծուն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, կադաստրային քարտեզի 06-112-0023-0010 ծածկագրից առանձնացվող, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և հողամասում առկա շինություններին տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, համայնք Ալավերդի, գ. Օծուն, 1-ին փողոց, 68/2 փոստային հասցեն:

4. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5. Սույն որոշման առաջին կետով սահմանված անշարժ գույքի սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և այն հանդիսանում է սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Հ. ԶԱՎԱՐՅԱՆ

2025թ. փետրվարի 07
ք. Ալավերդի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 277-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ
06-002-0028-0083 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ
ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ և 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեալորման ու հասցեներ պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշումով և Հայաստանի Հանրապետության կադաստր կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը և սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Վալեր Լենիկի Բարսեղյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 22012025-06-0060 վկայականը, 23.01.2025թ. թիվ 340 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ **որոշում եմ.**

1. Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի, Ալավերդի քաղաքի վարչական տարածքում գտնվող, կադաստրային քարտեզի 06-002-0028-0083 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0317 հա մակերեսով հողամասին և հողամասում գտնվող բնակելի տան փոստային հասցեն վերահասցեավորել և տրամադրել Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզ, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ջրավազանի փողոց, 10/8 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Հ. ԶԱՎԱՐՅԱՆ

2025թ. փետրվարի 06
ք. Ալավերդի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 278-Ա

**ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՇՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՋԻ 06-088-0116-0020 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.49872 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ՝ ԱՐԱՐԱՏ ԱԼՅՈՇԱՅԻ ՇԱԽԿՅԱՆԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ,
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԾԱԾԿԸ ՆՇԱԳԾՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 51-54-րդ, 59-րդ
և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի
135-րդ և 202-րդ, 188-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, «Գույքի
նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության
29.12.2005թ. N 2387-Ն որոշման, և Հայաստանի Հանրապետության կադաստրի
կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հաւցեավորման
հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Արարատ
Այրոջայի Շախկյանի դիմումը, անձնագրի պատճենը, 20.12.2024թ. Շնող բնակավայրի
վարչական ղեկավարի կողմից տրամադրված 30.05.1991թ. թիվ 4 որոշումից
քաղվածքը, փոստային հասցեի և կառուցման տարեթվի մասին տեղեկանքները, «ՏՍ-
ՈՒԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության
հատակագծերը՝ **որոշում եմ՝**

1. Վերականգնել Ալավերդի համայնքի Շնող բնակավայրի վարչական տարածքում
գտնվող, կադաստրային քարտեզի 06-088-0116-0020 ծածկագրով բնակավայրերի
նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական
նշանակության 0.49872 հա մակերեսով հողամասի նկատմամբ ֆիզիկական

անձ՝ Արարատ Այոշայի Շախկյանին (ծնված՝ 02.04.1970թ.) պատկանող հողամասի հողատկացման հիմքերը, սեփականության իրավունքը:

2. Ալավերդի համայնքի Շնող բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արարատ Այոշայի Շախկյանին (ծնված՝ 02.04.1970թ.) սեփականության իրավունքով պատկանող, կադաստրային քարտեզի 06-088-0116-0020 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.49832 հա մակերեսով հողամասում, 1997թ. ինքնակամ կառուցված կադաստրի կոմիտեում 2024KWLFVK ծածկագրով հաշվառված, 19 քմ արտաքին մակերեսով (18.95 քմ ներքին մակերեսով) ծածկը ենթակա է գրանցման նշագծված տարբերակով, որպես ինքնակամ կառույց:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Շնող բնակավայրի կադաստրային քարտեզի 06-088-0116-0020 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և հողամասում գտնվող գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզ, Ալավերդի համայնք, գյուղ Շնող, 2-րդ փողոց, 1-ին փակուղի, 11 փոստային հասցե:

4. Ինքնակամ կառուցված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում և կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

6. Սույն որոշման առաջին կետով սահմանված անշարժ գույքի սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և այն հանդիսանում է սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

7. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Հ. ԶԱՎԱՐՅԱՆ

2025թ. փետրվարի 07
ք. Ալավերդի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 փետրվարի 2025 թվականի N 279-Ա

**ԱՐՇԱԿ ՅՈՒՐԻԻ ԽՈՒԴԱԴՅԱՆԻՆ, ՆԱՐԻՆԵ ՌԱԶՄԻԿԻ ԿՈՍԱՆԴՅԱՆԻՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-112-
0004-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, հիմք ընդունելով Արշակ Յուրիի Խուդադյանի դիմումը, անձնագրի պատճենները, սեփականության իրավունքի N 2793017 վկայականը, «ՏՄ-ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված կադաստրի կրմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու կազմված հողամասի և շինության հատակագծերը, Օձուն բնակավայրի վարչական ղեկավարի կողմից 13.01.2025թ. տրված N 89 տեղեկանքը՝

որոշում եմ.

1. Օրինականացնել Արշակ Յուրիի Խուդադյանին և Նարինե Ռազմիկի Կոստանդյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ալավերդի համայնքի Օձուն գյուղ, 12-րդ փողոց, 10 հասցեում գտնվող, 06-112-0004-0006 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.12911 հա մակերեսով հողամասում, 2016թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կրմիտեում 2024XYLV4T ծածկագրով հաշվառված, 89.6 քմ արտաքին մակերեսով (77.3 քմ ներքին մակերեսով) անավարտ շինությունը, ընդհանուր 81.8 քմ արտաքին մակերեսով (74.7 քմ ներքին մակերեսով) օժանդակ շինությունները՝ մառանը, սանհանգույցը, պարիսպը:

2. Ինքնակամ կառուցված շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չեն ապառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն

ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Օրինականացված անավարտ շինության համար սահմանված 78310 (յոթանասունութ հազար երեք հարյուր տասը) ՀՀ դրամ և օժանդակ շինությունների համար սահմանված 42896 (քառասուներկու հազար ութ հարյուր իննսունվեց) արժեքով վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4 .Նշված իրավունքն ենթակա է պետական գրանցման:

5 .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

2025թ. փետրվարի 07
ք. Ալավերդի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 փետրվարի 2025 թվականի N 280-Ա

ՀՐԱԶՅԱ ՀԱՅԿԱԶԻ ՍԱՐԱՏԻԿՅԱՆԻՆ, ԿԱՐԻՆԵ ԼԵՎՈՆԻ ՄԵՍՐՈՔՅԱՆԻՆ, ՌՈԶԱ ՀՐԱԶՅԱՅԻ ՍԱՐԱՏԻԿՅԱՆԻՆ, ՀԱՅԿ ՀՐԱԶՅԱՅԻ ՍԱՐԱՏԻԿՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 06-037-0006-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԱՍԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Հրաչյա Հայկազի Սարատիկյանի դիմումը, անձնագրերի պատճենները, սեփականության իրավունքի N 843259 վկայականը, բնակելի տան տեխնիկական վիճակի մասին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 17.01.2025թ. տրված N 15/2 դրական եզրակացությունը, «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈՔԵՐՏԻ» Ա/Ձ կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու կազմված հողամասի և շինության հատակագծերը, Թեղուտ գյուղի վարչական բեկավարի կողմից 25.12.2024թ. տրված N 9125 տեղեկանքը՝

որոշում եմ

1. Օրինականացնել Հրաչյա Հայկազի Սարատիկյանին, Կարինե Լևոնի Մեսրոբյանին, Ռոզա Հրաչյայի Սարատիկյանին, Հայկ Հրաչյայի Սարատիկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Ալավերդի համայնքի Թեղուտ գյուղի վարչական տարածքում գտնվող, 06-037-0006-0006 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.16216 հա մակերեսով հողամասում, 2012թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2024D2H6F2

ծածկագրով հաշվառված, 6.6 քմ արտաքին մակերեսով (4.7 քմ ներքին մակերեսով) բնակելի տան մասը:

2. Ինքնակամ կառուցված շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ալավերդի համայնքի Թեղուտ գյուղի վարչական տարածքում գտնվող, 06-037-0006-0006 կադաստրային ծածկագրով, 0.16216 հեկտար մակերեսով հողամասին և հողամասում գտնվող անշարժ գույքերին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Թեղուտ, 1-ին փողոց, 30 փոստային հասցեն:

4. Օրինականացված բնակելի տան մասի համար սահմանված 4904 (չորս հազար ինը հարյուր չորս) ՀՀ դրամ արժեքով վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Նշված իրավունքն ենթակա է պետական գրանցման:

6 .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 փետրվարի 2025 թվականի N 281-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 27.12.2024 Թ. N 1933-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից 29/01/2025թ. տրված մասնաճիտական եզրակացությունը՝

որոշում եմ.

Ալավերդի համայնքի ղեկավարի 27.12.2024 թ. «ԱՎԵՏԻՔ ԱՐՇԱԿԻ ԸՍՅԱՆԻՆ, ԱԼՎԱՐԴ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԶԱՆԻՆՅԱՆԻՆ, ԱՐՇԱԿ ԱՎԵՏԻՔԻ ՕՍՅԱՆԻՆ, ԱՐՄԻՆԵ ԼՎԵՏԻՔԻ ՕՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԼՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՆԵՐԸ ՈՒ ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1933-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1 Որոշման 1-ին կետում «1 հատ պատուհանի» թվի և բառերի ԼՈՒՍԱՐԵՆ կարգալ «6 հատ պատուհանի» թիվը և բառերը:

1.2 Որոշման 4-րդ կետում «վճարը» բառից հետո լրացնել «ինչպես նաև բնակելի տան մեջ ինքնակամ կատարված ձևափոխության՝ 5 հատ պատուհանի համար սահմանված 3155 (երեք հազար հարյուր հիսունհինգ) դրամ արժեքով վճարը» արտահայտությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  

Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 282-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՐԵՎԱԾԱԳ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԼԱՏՐԱՅԻՆ
ՔԱՐՏԵՁԻ 06-020-0018-0007 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ և 42-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստան Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեներ պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն բրոշուրով և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրահանով, հիմք ընդունելով՝ Մհեր Մխիթարի Սարգսյանի կողմից լիազորված անձ՝ Կարինե Հենրիկի Գասպարյանի դիմումը, լիազորագիրը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 20122024-06-0019 վկայականը, 23.01.2025թ. թիվ 31 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, Արևածագ բնակավայրի վարչական ղեկավարի կողմից տրամադրված 27.01.2025թ. թիվ 366 փոստային հասցեի վերաբերյալ տրամադրված տեղեկանքը՝ **որոշում եմ.**

1. Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի, Արևածագ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, կադաստրային քարտեզի 06-020-0018-0007 ծածկագրով հողամասին և հողամասում գտնվող բնակելի տանը տրամադրել Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզ, համայնք Ալավերդի, գյուղ Արևածագ, 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, 4 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Հ. ԶԱՎԱՐՅԱՆ

2025թ. փետրվարի 07
ք. Ալավերդի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 փետրվարի 2025 թվականի N 283-Ա

ՎԱՐԴԱՆ ՀՐԱՆՏԻ ՄԵՀՐԱԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 06-088-0010-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 135-րդ և 202-րդ հոդվածներով, անձնագրերի պատճենը, սեփականության իրավունքի N 13072015-06-0019 վկայականը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնական կառույցի հաշվառման տեղեկանքն ու կազմված հողամասի և շինության հատակագծերը, Շնող գյուղի վարչական ղեկավարի կողմից 23.01.2025թ. տրված N 317 տեղեկանքը՝

որոշում եմ.

1. Օրինականացնել Վարդան Հրանտի Մեհրաբյանին սեփականության իրավունքով պատկանող, Ալավերդի համայնքի Շնող գյուղ, 12-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 1 հասցեում գտնվող, 06-088-0010-0004 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.22684 հա մակերեսով հողամասում, 1999թ. և 2016թ. ինքնական կառուցված, կադաստրի կոմիտեում 20243SEDUB ծածկագրով հաշվառված, 165.1 քմ արտաքին մակերեսով (132 քմ ներքին մակերեսով) բնակելի տունը, 54.5 քմ արտաքին մակերեսով (38.9 քմ ներքին մակերեսով) անասնաշենքը:

2. Ինքնական կառուցված շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու

կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Օրինականացված բնակելի տան համար սահմանված 122670 (մեկ հարյուր քսան երկու հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, օժանդակ շինության՝ անասնաշենքի համար սահմանված 24297 (քսանչորս հազար երկու հարյուր իննսունյոթ) ՀՀ դրամ արժեքով վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Նշված իրավունքն ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

2025թ. փետրվարի 07
ք. Ալավերդի